Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՆՇԱԾ ՈՒՂԻՈՎ

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Տ. ԱԼԻԽԱՆՅԱՆ

Վեց տասնամյակ առաջ Ռուսաստանի հերոսական պրոլետարիատը Վլադիմիր Իլյիչ Լենինի գլխավորած բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ վճռական գրոհի ելավ և խորտակեց բուրժուա-կալվածատիրական կարգերը։ Շահագործման, սոցիալական և ազգային ճնշման դեմ աշխատավորների պայքարը պատմության մեջ առաջին անգամ ավարտվեց նրանց լիակատար հաղթանակով։ Մենք հպարտությամբ և ազգային մեծ արժանապատվությամբ նշում ենք, որ Պետրոգրադի, Մոսկվայի և մյուս քաղաքների բարիկադների վրա կռվողների շարքերում կային հարյուրավոր հայ հեղափոխականներ, իսկ Հոկտեմբերի նվաճումների պաշտպանության համար մղված քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում մարտնչում էին հազարավոր հայ մարտիկներ և հրամանատարներ։ Ռուսաստանում պրոլետարական շարժման առաջին իսկ քայլերից, նշել է Լ. Ի. Բրեժնևը, հայ ժողովրդի լավագույն զավակները ամենայն ակտիվությամբ մասնակցեցին դրան։ Երևան եկավ ինտերնացիոնալիստ-հեղափոխականների մի հոյակապ համաստեղություն, որոնք ըմբռնում էին Ռուսաստանի բոլոր ժողովուրդների աշխատավորական դանգվածների շահերի հետ Հայաստանի աշխատավոր ժողովրդի շահերի անքակտելի կապը։ Իրենց ժողովրդի բախտը կապելով Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի պատմական առաքելության, Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ, նրանք առանց տատանվելու բռնեցին Լենինի նշած ուղին, դարձան նրա աշակերտները, բարեկամներն ու զինակիցները[1]։ Լենինի հեղափոխական առաջին ընկերներից էր Իսահակ Լալայանցը՝ հայ ժողովրդի աննկուն հեղափոխական զավակը։ Այնուհետև աստիճանաբար Լենինի շուրջն են համախմբվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի մյուս հերոսները՝ Կնունյանցը, Շահումյանը, Սպանդարյանը, Կասպարովը, Կամոն, Կարախանը, Կասյանը, Բեգզադյանը, Ավանեսովը, Մյասնիկյանը, Տեր-Գաբրիելյանը, Բորյան եղբայրները, Աթարբեկյանը, Տերյանը և շատ ու շատ ուրիշ պրոֆեսիոնալ հեղափոխականներ։ Նրանք արժանավոր ավանդ ներդրեցին համառուսաստանյան հեղափոխական շարժման զարգացման, նոր տիպի մարքսիստական կուսակցության ստեղծման մեջ, ակտիվորեն մասնակցեցին հին աշխարհի վրա կատարվող գրոհին և նոր, սոցիալիստական աշխարհի կառուցմանը։

Հայ ժողովուրդը հավետ պարտական է կոմունիստական կուսակցությանը, նրա հանճարեղ առաջնորդ Վ. Ի. Լենինին իր ազգային ու սոցիալական ազատագրության և բարգավաճման համար։ Մեր ժողովրդի պատմական

---

[1] Տե՛ս Լ. Ի. Բ ր ե ժ ն և, Սովետական Հայաստանի 50 տարին, Երևան, 1970, էջ 7։

փորձով ապացուցվեց լենինյան այն դրույթի հանճարեղությունը, որ ազգային ազատագրական պայքարը լիակատար հաջողության հույս կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ նա սերտորեն միաձուլվում է սոցիալական ազատագրության համար հեղափոխական պրոլետարիատի և աշխատավորության դասակարգային պայքարի հետ։ Վլադիմիր Իլյիչը բազմիցս ընդգծել է, որ միայն պրոլետարիատի տիրապետությունը լիակատար պայմաններ կապահովի փոքր ազգերի ազատ զարգացման համար, բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների դաշինքի ու համագործակցության համար։ Այդ նկատառումներով էր նաև, որ Լենինը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրում էր ցարական Ռուսաստանի ճնշված ժողովուրդների կյանքն ու պատմությունը, տնտեսական ու կուլտուրական զարգացման բնորոշ առանձնահատկությունները, ազգային փոխհարաբերությունները և որոշում ռուսական պրոլետարիատի հետ նրանց դասակարգային դաշինքի ու համատեղ պայքարի ձևերը։

Հասարակական միակ ուժը, որ XX դարի սկզբից վճռականորեն դրեց հայ ժողովրդի ազատագրման հարցը, Վ. Ի. Լենինի ղեկավարած բոլշևիկների կուսակցությունն էր։ Կոմունիստական կուսակցությունը դարձավ հայ ժողովրդի ազգային-ազատագրության իսկական կազմակերպիչը։

Բոլշևիկները միշտ ընդգծել են, որ հայ ժողովրդի իսկական ազատությունը սերտորեն կապված է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի հետ Ռուսաստանում։ Միաժամանակ արևմտահայության վիճակին, նրա ազատագրման հարցերին բազմիցս անդրադարձել են բոլշևիկյան կուսակցության տպագիր օրգանները՝ սկսած Լենինյան «Ռսկրայից» մինչև «Պրավդա» թերթը և մյուս պարբերականները։

●

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բոլշևիկների կուսակցությունը Լենինի գլխավորությամբ անողոքաբար մերկացնում էր այդ պատերազմի իմպերիալիստական, նվաճողական բնույթը և կործանարար հետևանքները բոլոր փոքր ու ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի համար, որը պատերազմի տարիներին ապրեց իր ամբողջ բազմադարյան պատմության մեջ կրած աղետներից ամենաահավորը։ Պատերազմի վերաբերյալ իր աշխատություններում Լենինը պսակազերծ էր անում Մերձավոր Արևելքը, այդ թվում Արևմտյան Հայաստանը իրար մեջ բաժան-բաժան անելու մասին Անտանտի պետությունների ստոր ու գաղտնի գործարքը։ Նա ցույց էր տալիս, թե ինչպես Անտանտի իմպերիալիստները նենգորեն իրենց զավթողական քաղաքականությանն են ենթարկում հայ ժողովրդի ազատագրական ձգտումները։

Հոկտեմբերի նախօրյակին գրած մի շարք աշխատություններում Լենինը պարզորոշ դրսևորեց բոլշևիկների կուսակցության վերաբերմունքը Հայաստանի ազատագրման ուղիների վերաբերյալ։ 1917 թ. հունիսի 9-ին (22-ին) Սովետների համառուսաստանյան առաջին համագումարում պատերազմի հարցին նվիրված իր ճառում նա ժամանակավոր կառավարությունից պահանջեց հրաժարվել Արևմտյան Հայաստանի նկատմամբ անեքսիայի քաղաքականությունից, անմիջապես հռչակել Արևմտյան Հայաստանի անկախությունը։ Նա ուղղակի ասել է. «Երբ նա (այսինքն ժամանակավոր կառավարությունը—Ս. Ա.) Հայաստանը դարձներ անկախ հայկական հանրապետություն և այն դրամը, որ մեզնից վերցնում են Անգլիայի և Ֆրանսիայի ֆինանսիստները, տար

նրանց, այդ լավ կլիներ»[2], *իսկ 1917 թ. սեպտեմբերի 16-ին «Հեղափոխության խնդիրները» հոդվածում Լենինը գրել է.* «Իսկույն ևեթ բավարարել ուկրաինացիների և ֆինլանդացիների պահանջները, ապահովել նրանց, ինչպես և բոլոր այլացեղերին Ռուսաստանում, լիակատար ազատություն, մինչև անջատման ազատությունը, կիրառել նույն այդ բանը ամբողջ Հայաստանի նկատմամբ»[3] *(ընդգծումը մերն է—Ս. Ա.)։ Լենինը, խոսելով Հայաստանի անկախության մասին, նկատի ուներ թե՛ Արևմտյան Հայաստանը, որը Թուրքիայից գրավել էին ռուսական զորքերը և թե՛ Արևելյան Հայաստանը, որը գտնվում էր ռուսական տիրապետության տակ։*

Ազգային հարցի խոշոր տեսաբան Ստեփան Շահումյանը Անդրկովկասում հետևողականորեն իրագործում էր ազգային հարցի լենինյան ծրագիրը։ 1917 թ. հոկտեմբերի 6-ին ՌՍԴ(բ)Կ Կովկասյան մարզային համագումարում ազգային հարցի շուրջն ունեցած ելույթներում Շահումյանը շարադրեց կոմիտեի ազգային քաղաքականությունը։ Խոսելով Անդրկովկասի վարչական բաժանման, ֆեդերացիայի սկզբունքի կիրառման անհրաժեշտության, ժողովուրդների ազգային-տերիտորիալ փոխհարաբերությունների կարգավորման մասին, նա հատկապես անդրադարձավ Արևմտյան Հայաստանի ապագային։ «Ազգային հարցի լուծման ժամանակ,— *ասաց Շահումյանը,*— անխուսափելիորեն դրվում է Թուրքահայաստանի հարցը։ Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք այդ մարզի բնակչության իրենց, որոնք իրենք պետք է որոշեն իրենց բախտը։ Ռուսաստանին նրանց միանալու դեպքում նրանք պետք է միավորվեն հայերին»[4]։

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սովետական կառավարությունը հայտարարեց, որ ցարական և ժամանակավոր կառավարությունների անեքսիական քաղաքականությանը ինքը հակադրում է ամբողջ Հայաստանի ազատագրման և անկախության քաղաքականությունը։ 1917 թ. նոյեմբերի 20-ին Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլմաններին հղած կոչում սովետական կառավարությունը պարզորոշ հայտարարեց. «Հենց որ դադարեն ռազմական գործողությունները, հայերին կտրվի իրենց քաղաքական բախտը ազատորեն տնօրինելու իրավունք»[5]։ *Այդ հիման վրա էլ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ և անձնական մասնակցությամբ մշակվեց և ընդունվեց «Թուրքահայաստանի մասին» հանրահայտ դեկրետը։ Վահան Տերյանը, որ Լենինի հանձնարարությամբ կազմել էր Արևմտյան Հայաստանի վիճակի մասին զեկուցագիրն ու դեկրետի նախագիծը, և այդ առթիվ մի քանի հանդիպումներ ունեցել Լենինի հետ, նամակներում պատմում է, թե ինչպիսի հոգատարությամբ և ուշադրությամբ էր վերաբերվում Լենինը հայ ժողովրդի ճակատագրին։* «Այսօր զրույց ունեցա այդ առթիվ ընկ. Լենինի հետ,— *գրում է նա,*— *որին բացատրեցի, թե ինչու անհրաժեշտ է առայժմ զորքերը չհանել Հայաստանից և պայմանավորել Հայաստանի ինքնորոշումը աքսորվածների և փախստականների վերադարձով և այլ գարանտիաներով։ Նա շատ լավ վերաբերվեց և պարզեց, որ երբ ինքը ասում է զորքերը հանել Հայաստանից, սրանով ուզում է ասել, թե երբ*

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 37։
3 Նույն տեղում, հատ. 26, էջ 58։
4 Ս տ. Շ ա հ ու մ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 493։
5 Տե՛ս «Правда», 22 նոյեմբերի, 1917։

հայերը պահանջեն այդ, որպեսզի նրանց վրա ճնշում չլինի Ռուսիայի կողմից և նրանք ստիպված չլինեն ռուսական օրիենտացիա ընդունել, իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասերը»[6]։ Ահա Լենինի այս միտքը, որ Տերյանը հաղորդել է հարազատորեն, ամբողջովին հերքում է դաշնակցականների և նրանց իմպերիալիստական տերերի զրպարտանքները՝ ռուսական սվիններով Հայաստանը նվաճելու, սովետականացնելու վերաբերյալ։

Արևմտյան Հայաստանի մասին դեկրետի նախապատրաստման ժամանակ Լենինը անձամբ խորհրդակցում էր Շահումյանի, Ավանեսովի, Կարախանի, Լուկաշինի և մյուս հայ բոլշևիկների հետ։ 1917 թ. դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) ժողովրդական կոմիսարների սովետը Լենինի նախագահությամբ ընդունեց դեկրետ «Թուրքահայաստանի» մասին։ Ժողկոմսովետը այդ դեկրետով ճանաչելով հայ ժողովրդի ինքնորոշման լիակատար իրավունքը, արևմտահայերին տվեց ազատ հանրաքվե անցկացնելու իրավունք և մշակեց այն երաշխիքները, որոնք հնարավորություն կտային հայ ժողովրդին՝ կատարելապես ազատ պայմաններում արտահայտելու իր կամքը հանրաքվեի միջոցով։ Ժողկոմսովետը այդպիսի երաշխիքներից մեկը համարում էր Արևմտյան Հայաստանից ռուսական և թուրքական զորքերի դուրս բերումը, որով կբացառվեր հայերի վրա դրսից որևէ ճնշում գործադրելու հնարավորությունը։ Ժողկոմսովետը այս կապակցությամբ առաջարկում էր կազմակերպել հայկական ժողովրդական միլիցիա, որը պետք է ապահովեր քաղաքացիների անձի անձեռնմխելիությունը, գույքի անվտանգությունը և ներքին կարգուկանոնը երկրում։ Ամբողջ հայ ժողովրդի ազատ ինքնորոշման մյուս նախապայմանը Ժողկոմսովետի դեկրետում համարվում էր աշխարհով մեկ ցրված հայերի, ինչպես և թուրքական կառավարության կողմից Միջագետքի ավազուտները տարագրված հայերի անարգել վերադարձն իրենց հայրենի օջախները։ Ժողկոմսովետը հանձնարարեց Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին՝ օգնել հայ ժողովրդին դեկրետը իրագործելու, Թուրքիայի հետ Հայաստանի սահմանները որոշելու հարցում։

Սակայն դեկրետը, որ հաստատվեց Սովետների III և V համագումարների կողմից, հնարավոր չեղավ իրագործել։ Շուտով Գերմանիան հարձակում սկսեց Պետրոգրադի վրա, իսկ Թուրքիան՝ Անդրկովկասի վրա, և Սովետական Ռուսաստանը ստիպված եղավ կնքելու Բրեստ-Լիտովսկի ծանր հաշտությունը։

1917 թ. դեկտեմբերին ստեղծվեց հայկական գործերի կոմիսարիատը։ Ժողկոմսովետը կոմիսար նշանակեց Լենինի զինակից և օգնական Վառլամ Ալեքսանդրովիչ Ավանեսովին (Սուրեն Կարապետի Մարտիրոսյանին), կոմիսարի տեղակալ՝ հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանին։ Կոմիսարիատը իր ողջ գործունեությունը ենթարկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից փրկելու, հայ գաղթականությանը նյութական և կուլտուրական օգնություն ցույց տալու գործին և այլն։ Կոմիսարիատի ամբողջ գործունեությունը ընթանում էր Լենինի ցուցումներով և աջակցությամբ։

Հայկական գործերի կոմիսար Վ. Ա. Ավանեսովը գրություն է ուղղում կառավարությանը՝ խնդրելով հայերեն թերթ հրատարակելու հնարավորություն ստեղծել։ «Սովետական իշխանության գաղափարները,— գրում է նա,— հայ

6 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963, էջ 480։

բանվորների և գյուղացիների լայն խավերում պրոպագանդելու և սովետական իշխանության օրգանների գործունեության մասին հայ մասսաների մեջ ճիշտ տեղեկություններ տարածելու նպատակով, որին ամեն կերպ փորձում են վարկաբեկել հայ համաձայնողական և բուրժուական կուսակցությունների բերբերը, հայկական կոմիսարիատը որոշել է հրատարակել իր օրգանը հայերեն լեզվով և այն լայնորեն տարածել ամբողջ Ռուսաստանում...»[7]:

Ժողկոմսովետին հասցեագրված գրության վրա Վ. Ի. Լենինը հետևյալ մակագրությունն էր արել. «Ընկեր Ավանեսով, պետք է մայրենի լեզվով տպագրել հեղափոխության դեկրետները: Կառավարությունն այդ բանում ձեզ կօգնի: Աշխատեցեք եռանդով» (ընդգծումը մերն է—Ս. Ա.): Կենտգործկոմի թույլտվությամբ ձեռք բերելով հայկական տառերը, կոմիսարիատը 1918 թ. մայիսին ստեղծում է իր տպարանը: 1918 թ. հունիսի 22-ին Մոսկվայում լույս է տեսնում հայկական գործերի կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը, որը խոշոր գեր կատարեց սովետական իշխանության գաղափարները հայ ժողովրդի մեջ տարածելու գործում: Թերթի առաջին համարում տպագրված է հայկական գործերի կոմիսարիատի կոչը՝ «Նամակներ հայ գյուղացիներին և բանվորներին», որը գրել է Վ. Տերյանը: Այդ կոչը ընթերցողներին բացատրում է Հոկտեմբերյան հեղափոխության իմաստն ու նշանակությունը, ցույց տալիս բոլշևիկյան կուսակցության և սովետական իշխանության ազատարար քաղաքականությունը, հայ գյուղացիներին և բանվորներին կոչ է անում համախմբվել Հոկտեմբերյան հեղափոխության դրոշի ներքո, մտնել նրա կարմիր գնդերի մեջ, համոզված լինելով, որ Հայաստանի իրական ազատագրումը հնարավոր է միայն Սովետական Ռուսաստանի օգնությամբ: Այդ կոչում ասված է. «Եվ ահա մենք, կոմունիստ-բոլշևիկներս, կոչ ենք անում Ձեզ, հայ գյուղացիներ և հայ բանվորներ՝ միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների իշխանության գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին»[8]:

Կոմիսարիատը այդ տարիներին իր բաժանմունքների միջոցով հրատարակեց բազմաթիվ թերթեր, բյուլետեններ, ամսագրեր, ինչպես նաև 80 անուն գիրք՝ կես միլիոն տպաքանակով:

1918—1920 թթ. Սովետական Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի ցուցումներով մեծ օգնություն ցույց տվեց ամբողջ Ռուսաստանով մեկ ցրված կես միլիոն հայ գաղթականներին: Ժողկոմսովետը այդ տարիներին մի քանի անգամ քննարկեց հայ գաղթականության հարցը և բաց թողեց ղգալի գումար կազմող նպաստ, կտորեղեն, հագուստ, մթերքներ, դեղորայք:

1918 թ. հունվարին Անդրկովկասի գաղթական հայերի համար Ժողկոմսովետի բաց թողած 6 194 784 ռուբլին տեղ չի հասնում: Այն ճանապարհին կողոպտում են սպիտակ գվարդիական բանդաները: Ստ. Շահումյանը այդ մասին իրազեկ է պահում Լենինին: Լենինի հանձնարարությամբ հայկական

---

7 ЦГИАОР, ф. 1235, оп. 93, д. 163, *թ. 69:*

8 *Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956, էջ 600:*

գործերի կոմիսար Վ. Ավանեսովը 1918 թ. հունիսի 26-ին Ժողկոմսովետի նիստում զեկուցում է «Հայ գաղթականներին անհապաղ օգնություն հասցնելու» մասին։ Լենինի նախագահությամբ Ժողկոմսովետի նիստը որոշում է կրկին բաց թողնել նույն չափով գումար, այն գնել հայկական գործերի կոմիսարիատի տրամադրության տակ։ Հայկական գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամները և աշխատակիցները մեկնում են տեղերում հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու։ Հայկական գործերի կոմիսարիատի տեղակալ Վահան Տերյանը 1918 թ. հուլիսի 29-ին հատուկ ջոկատ կազմած ճանապարհվում է Աստրախան և Հյուսիսային Կովկաս, որտեղ կուտակված էր հայ գաղթականների մեծ զանգված։ Նա իր հետ տանում է երկու միլիոն ռուբլի, դեղորայք, հագուստ, գրականություն։

Միայն 1918—1919 թթ. ծանր տարիներին հայ գաղթականներին սովետական կառավարությունը բաց թողեց 10 միլիոն ռուբլի դրամ, 350 հազար արշին գործվածք, 30 հազար կտոր պատրաստի հագուստ և մեծ քանակությամբ կոշկեղեն, դեղորայք և բժշկական գործիքներ։ Վ. Ի. Լենինի ցուցումներով հայ գաղթականների երեխաների համար տարբեր քաղաքներում կազմակերպվեցին որբանոցներ, արհեստանոցներ, ճաշարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ։

Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությունը մեծ հոգատարություն էր ցուցաբերում ոչ միայն հայ ժողովրդին նյութական օգնություն ցույց տալու հարցում, այլև իր դեկրետներով դնում էր սովետահայ մշակույթի հիմքը։ Հայկական գործերի կոմիսարիատը այդ տարիներին վերակառուցեց Ռուսաստանի շատ քաղաքներում գործող հայկական հին դպրոցները և գաղթականաշատ քաղաքներում բացեց նոր դպրոցներ, զբաղվեց նաև Լազարյան ճեմարանի վերակառուցման հարցով։ 1919 թ. մարտի 4-ին Ժողկոմսովետը ընդունեց Լազարյան ճեմարանի մասին դեկրետը, որի տակ դրված էր Վ. Ի. Լենինի ստորագրությունը։ Այդ դեկրետով Լազարյան ճեմարանի ղեկավարությունը դրվեց հայկական գործերի կոմիսարիատի և ՌՍՖՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի վրա։ Խոշոր գրականագետ և հեղափոխական Պողոս Մակինցյանը նշանակվեց Լազարյան ճեմարանի կոմիսար։ Ճեմարանը վերանվանվեց հայկական ինստիտուտ։ Ստեղծվեց ինստիտուտի գիտական խորհուրդ, որի կազմում ընտրվեցին Վ. Տերյանը, Պ. Մակինցյանը, Հ. Օրբելին, Ն. Մառը, Ն. Ադոնցը, Կոստանյանը և Մսերյանը։ Երբ Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն, 1921 թ. հոկտեմբերին Վ. Ի. Լենինի ցուցումով Կենտգործկոմը որոշում ընդունեց Լազարյան ճեմարանը Հայաստանի կուլտուրայի տուն դարձնելու վերաբերյալ։ Սովետական Հայաստանի Մոսկվայի կուլտուրայի տունը խոշոր դեր կատարեց հայ մշակույթի զարգացման և այն մայրաքաղաքի բնակչությանը ներկայացնելու, ինչպես նաև Մոսկվա քաղաքում ապրող ավելի քան 100 հազար հայերի կուլտուրական սպասարկման գործում։

1920 թ. բարդ իրադրության պայմաններում Լենինի ղեկավարությամբ կոմունիստական կուսակցությունը պայքարում էր հայ ժողովրդի փրկության, Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար։

1920 թ. սեպտեմբերին Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա։ Հայ ժողովրդի համար ստեղծված ահավոր այդ ժամին սովետական Ռուսաստանը

դաշնակցական կառավարությանն առաջարկեց իր միջնորդությունը։ Դաշնակցականները, սակայն, մերժեցին այդ առաջարկը։

Իր արկածախնդրական քաղաքականությամբ դաշնակցությունը հայ ժողովրդին հասցրեց ազգային աղետի եզրին։ Երկրում մոլեգնում էին սովը, համաճարակներն ու մահը։ Դաշնակցական կառավարության քաղաքականությունը հակաժողովրդական էր և այն իրականացվում էր ի հաճույս ազգային բուրժուազիայի և նրա իմպերիալիստական տերերի։ Հայաստանի բոլշևիկները, մերկացնելով դաշնակցական արկածախնդիրների և նրանց իմպերիալիստական տերերի համաժողովրդական քաղաքականության էությունը, աշխատավորներին կոչ էին անում վճռական պայքար մղելու հանուն սովետական իշխանության։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբած բանվորներն ու գյուղացիները Հայաստանը հռչակեցին սովետական։ Նրան օգնության եկավ XI կարմիր բանակը։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, Հայաստանում սովետական իշխանության հաստատումը հայ ժողովրդին բերեցին իսկական ազգային ու սոցիալական ազատագրություն, արմատական շրջադարձ նշանավորեցին մեր ժողովրդի ճակատագրում։

Դաշնակցության տիրապետության շրջանից ժառանգություն մնացին արյունաներկ խոպանացած դաշտեր, կործանված արդյունաբերություն, ժանգոտված երկաթգիծ, դատարկված գանձարկղ, անապատի վերածված մի երկիր, ուր ծվարել էր սովից ու համաճարակից գալարվող ժողովուրդ, որից 200 հազար՝ թշվառության եզրին հասցված անգործ ու անտուն գաղթականներ, պատերի տակ կծկված, սոված ու մերկ 50 հազար որբեր։

Իր սեփական ուժերով այդ դժոխային դրությունից դուրս գալ Հայաստանը չէր կարող։ Նրան անհրաժեշտ էր դրսի համակողմանի և տևական օգնություն։ Միայն Սովետական Ռուսաստանի ռազմա-քաղաքական և տնտեսական օգնությամբ հնարավոր էր Հայաստանը դուրս բերել այդ վիճակից։

ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Ժողկոմսովետը Լենինի գլխավորությամբ միջոցներ ձեռնարկեցին Հայաստանի Հեղկոմին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար։ Դեկտեմբերի 2-ին Լենինը ողջունեց սովետական իշխանության հռչակումը Հայաստանում։ «Հանձին Ձեզ,— գրել է Լենինը Կասյանին,— ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն Լենինի նախագահությամբ դեկտեմբերի 4-ին քննեց Սովետական Հայաստանին անհապաղ օգնություն ցույց տալու հարցը։ Լենինի առաջարկով սովետական կառավարությունը ցուցում տվեց XI կարմիր բանակի ֆոնդից առանձնացնել 50 վագոն հացահատիկ և Բաքվից շտապ ուղարկել Երևան։ Դեկտեմբերի 13-ին Լենինը Կրեմլում ընդունեց Հայաստանի Հեղկոմի անդամներ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Ասքանազ Մռավյանին։ Իրեն հատուկ խորաթափանց ուշադրությամբ լսելով Հայաստանի կառավարության անդամների հաղորդումը երկրի ծանր դրության մասին, Լենինն ասաց. «Մենք ամեն կերպ կօգնենք հայ ընկերներին, դա ինքնըստինքյան հասկանալի է»[9]։ Եվ իրոք, այդ նույն օրը Ժողկոմսովետը որոշեց որպես առաջին օգնություն Հայաստանին բաց թողնել երեք միլիարդ ռուբլի։ Այդ գումարը

9 «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1925։

Վ. Ի. Լենինի կարգադրությամբ հանձնվեց Մռավյանին, որն անմիջապես այն փոխադրեց Երևան։ Սահակ Տեր-Գաբրիելյանը Լենինի հանձնարարությամբ կազմեց Սովետական Հայաստանի մատակարարման պահանջագիրը, որը Ս. Մ. Կիրովի և Գ. Կ. Օրջոնիկիձեի եզրակացությունից հետո հաստատվեց քաղբյուրոյում։

Լենինը Հայաստանի մատակարարման գործին լուրջ նշանակություն տալով, հարցը քննարկման դրեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում։ Քաղբյուրոն 1921 թ. մարտի 2-ին ստեղծեց Հայաստանի մատակարարման հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում էին նաև Ա. Բեզվադյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ալ. Մյասնիկյանը, Ռ. Քաթանյանը։ Հանձնաժողովն իր եզրակացությունները ներկայացրեց Լենինին։

1921 թ. ապրիլի 4-ին ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում ընդունեց Իրանում Հայաստանի համար հաց և այլ մթերքներ գնելու նպատակով բաց թողնել 1 500 հազար ռուբլի (ոսկով)։

Ապրիլի 9-ին, պատասխանելով Օրջոնիկիձեի հեռագրին, Լենինը գրեց. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին։ Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք պարենկոմին արված ամեն տեսակ հանձնարարություններ...»[10]։

Կոմունիստական կուսակցության Կենտկոմի և Վ. Ի. Լենինի ձեռնարկած վճռական միջոցների և դրանք հետևողականորեն կատարելու շնորհիվ Սովետական Հայաստանը 1921 թ. Սովետական Ռուսաստանից ստացավ ամեն տեսակի հնարավոր աջակցություն։ Ս. Լուկաշինը ասել է. մենք անցյալ տարի ապրել ենք Ռուսաստանի օգնությամբ, այնտեղից ստանալով մոտ 5 միլիոն ոսկու արժողությամբ ապրանքներ, այն էլ մի այնպիսի ժամանակ, երբ Ռուսաստանը ունեցել է սով՝ բառի բուն նշանակությամբ։

1922 թ. հոկտեմբերի 27-ին Աշխատանքի պաշտպանության խորհուրդը Հայաստանի բամբակագործության զարգացման համար բաց թողեց մեկ և կես միլիոն ռուբլի ոսկով։ Լենինը թեև հիվանդ էր, բայց հետևում էր, որ այդ գումարը տեղ հասնի։ Հոկտեմբերի 28-ին Լենինը գրել է. «Դրեցեք՝ արդյոք ոսկին Հայաստան ուղարկվա՞ծ է (կարծեմ որոշված է 1,5 միլիոն ռուբլի)։ Էլ ի՞նչ միջոցներ են ձեռք առնված հայերին օգնելու համար։ Պետք է արագացնել և ստուգել, սպասում եմ պատասխանին»[11]։

Վ. Ի. Լենինը մինչև իր կյանքի վերջին օրերը առիթը բաց չէր թողնում իմանալու, թե ինչպես է ապրում հայ ժողովուրդը, ինչ հաջողությունների է հասել նա իր քայքայված երկրի վերականգնման գործում։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության իրականացման շնորհիվ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում Սովետական Հայաստանի ժողովուրդը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակը դիմավորում է կյանքի բոլոր բնագավառներում ձեռք բերած վիթխարի նվաճումներով։ Միայն բոլշևիզմի ճանապարհը, միայն լենինիզմի ճանապարհն ընտրելով հայ ժողովուրդը փրկվեց կործանումից և հասավ այսօրվա բարձունքներին։

---

10 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 521։

11 Նույն տեղում, հատ. 45, էջ 646։